ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Գորիս **10 հոկտեմբերի 2025թ**

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են Գորիս համայնքի ավագանու 21 անդամներից 13-ը՝ Արտյոմ Աղաջանյանը, Մարգարիտ Առուստամյանը, Միեր Արզումանյանը, Լևոն Բաղդասարյանը, Անի Գալստյանը, Հերմինե Դիլանչյանը, Գուրգեն Հակոբյանը, Մարինե Հակոբյանը, Սոնա Մկրտչյանը, Արմենուհի Սոնյանը, Արտակ Տոռոզյանը, Ռուզաննա Տոռոզյանը և Նարեկ Օրդյանը:

Բացակա էին՝ Առուշ Առուշանյանը, Վլադիմիր Աբունցը, Հայկ Իվանյանը, Կարեն Լազարյանը, Մենուա Հովսեփյանը, Դավիթ Մաշուրյանը, Վահրամ Սարգսյանը, Գարեն Օհանջանյանը:

Ավագանու անդամ Վլադիմիր Աբունցը աշխատակազմին գրավոր տեղեկացրել է նիստից բացակայելու մասին:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Իրինա Յոլյանը, Գարեգին Փարսյանը, Նարեկ Մնացականյանը և Արմեն Ավետիսյանը:

Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը գտնվում է արձակուրդում և համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի,

նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արտյոմ Աղաջանյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

Նիստն առցանց հեռարձակվել է:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՏՅՈՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, համայնքի ավագանին ***որոշում է***"

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2025թվականի հոկտեմբերի 10-ի իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրակարգը՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԵՍՏ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 111-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱՀՈՒՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆՁՈՐԵՍԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 7-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՌԱՖԻԿ ԴԻԼԱՆՉՅԱՆԻՆ ԵՎ ՆՎԱՐԴ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 123-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

1" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՆԱՐԵԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, համայնքի ավագանին ***որոշում է"***

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի ընթացքի մասին Գորիս համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն կից հավելվածների:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը, Ձեռնպահ է քվեարկել Մարգարիտ Առուստամյանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 124-Ա)*

ԼՍԵՑԻՆ

2" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210009-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ/տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 15,0 մլն ՀՀ դրամով և ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքի զարգացման հնգամյա և տարեկան աշխատանքային պլաններով 2025 թվականի ընթացքում իրականացվող կապիտալ ծրագրերի իրականացման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 125-Ա)*

ԼՍԵՑԻՆ

3" ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԵՍՏ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով Համեստ Ղազարյանի դիմումը, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Տալ համաձայնություն ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Վանքի տափ թաղամաս 10 շենքի հարևանությամբ թիվ 8 հասցեում գտնվող բնակավայրերի խառը կառուցապատման 0,001984 հա մակերեսով հողամասի (կադաստրային ծածկագիր 09-003-0213-0027), Գորիս համայնքի և Համեստ Ղազարյանի հետ 2013թվականի փետրվարի 1-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել 25 /քսանհինգ/ տարի ժամկետով՝ մինչև 2050 թվականի դեկտեմբերի 31-ը:
2. Համեստ Ղազարյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված և նոտարական կարգով վավերացված հողամասի կառուցապատման

իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու վերաբերյալ:

3. Սահմանել, որ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու վերաբերյալ համաձայնագրի կնքման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են կառուցապատող Համեստ Ղազարյանի միջոցների հաշվին:
4. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման կատարումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 126-Ա)*

ԼՍԵՑԻՆ

4" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 7-ի «Համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 101-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 72-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման թիվ 12 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 15–ից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը, Լևոն Բաղդասարյանը և Նարեկ Օրդյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 127-Ա)*

ԼՍԵՑԻՆ

5" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ՓԱՐՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետը, և Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. 2025 թվականին բաց դասական աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Ա. Սաթյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 20/2 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,035հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-003-0041-0067)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 1060000(մեկ միլիոն վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 146/5 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Ա. Բակունցի փողոցի թիվ 2/2 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,01072հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-003-0045-0049)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 2490000(երկու միլիոն չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 146/2 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Գ. Արզումանյան փողոցի թիվ 1/16 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,01364հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-003-0236-0037)՝ առևտրի տաղավար կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 3180000(երեք միլիոն մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 146/2 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):
   4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի 6-րդ թաղամասի թիվ 34 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,065հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-003-0206-0029)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 2330000 (երկու միլիոն երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 146/4 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):
   5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Հարթաշեն գյուղի 9-րդ փողոցի թիվ 4/1 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,08հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-055-0115-0011)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 553000 (հինգ հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ

գույքի գնահատման N 146/1 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Հարթաշեն գյուղի 9-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,06569հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-055-0115-0015)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 529000 (հինգ հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 146 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

7) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Բարձրավան գյուղի 9-րդ փողոցի թիվ 11 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,07004հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-021-0001-0016)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 120000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 146/6 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Բարձրավան գյուղի 5-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,1հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-021-0006-0013)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 170000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 146/7 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

9) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 1 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,05հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0413-0011)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 418000 (չորս հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 155/2 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

10) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 2 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,05հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0413-0007)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 418000 (չորս հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 155/3 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

11) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 3 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,05հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0413-0004)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 418000 (չորս հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ

գույքի գնահատման N 155/4 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

12) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 4 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,05հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0413-0006)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 418000 (չորս հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 155/5 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

13) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 5 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,05089հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0413-0009)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 425000 (չորս հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 155/6 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

14) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 6 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,05104հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0413-0003)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 427000 (չորս հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 155/7 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

15) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 7 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,05հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0413-0010)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 418000 (չորս հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 155/8 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

16) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 8 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,05հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0412-0002)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 418 000 (չորս հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 155/9 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

17) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Քարահունջ գյուղի Ավանգարդ թաղամասի թիվ 9 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,04983հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-110-0413-0008)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 416000 (չորս հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ՝

համաձայն անշարժ գույքի գնահատման N 155/10 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

18) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի թիվ 12/56 հասցեում գտնվող բնակավայրերի կատեգորիայի հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ 0,00115հա հողատարածքը (կադաստրային ծածկ. 09-003-0101-0032)՝ առևտրի տաղավար կառուցելու նպատակով, աճուրդի մեկնարկային գինն է՝ 390000(երեք հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 155 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):

2. Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է վճարի հողատարածքի գնահատման, սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ գործառույթների և դրանց հետ կապված ծախսերը:
3. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել նախատեսված հողամասերի աճուրդի կազմակերպումը և իրականացումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 128-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

6" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 111-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ՓԱՐՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի 2025 թվականի սեպտեմբերի 29-ի Կ-29092025-09-0132 կասեցման որոշումը, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ակներ գյուղում Վարդան Արզումանյանին սեփականություն հանդիսացող 0,144 հեկտար հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 111-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.
   1) որոշման հիմնական մասում «2025 թվականի օգոստոսի 19-ի №ՆԹ-7192-25» բառերն ու թվերը փոխարինել «2025 թվականի հոկտեմբերի 2-ի №ՆԹ-8829-25» բառերով և թվերով:
   2) որոշման 1-ին կետում «պահեստային շինություն» բառերը փոխարինել «անասնաշենք» բառով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 129-Ա)*

ԼՍԵՑԻՆ

7" ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱՀՈՒՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ՓԱՐՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման, հաշվի առնելով Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 9-ի N-2/փ-290 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Սյունիք-2» միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Քարահունջ բնակավայրի համակցված փաստաթղթում կատարել փոփոխություն և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.07 հեկտար հնդավոր հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-110-0007-0002) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ՝ բնակելի տուն կառուցելու համար:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 130-Ա)*

ԼՍԵՑԻՆ

8" ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆՁՈՐԵՍԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ՓԱՐՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ

հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման, հաշվի առնելով Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 11-ի N-2/փ-297 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Սյունիք-2» միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Խնձորեսկ բնակավայրի համակցված փաստաթղթում կատարել փոփոխություն և համայնքայի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 1,15 հեկտար այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-045-0120-0211) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ՝ բնակելի տներ կառուցելու համար:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 131-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

9" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ՓԱՐՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ն մասի 42-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Արցախից բռնի տեղահանված և Գորիս քաղաքում սոցիալապես անապահով քաղաքացիներին բնակարաններով ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ տալ համաձայնություն Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաքաքի Օրբելյանների փողոցի թիվ 20/1 հասցեում գտնվող հողատարածքի և հողատարածքում առկա մարզադահլիճի գործառնական նշանակությունները փոխել՝ հողամասը՝ որպես բնակավայրերի «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության և մարզադահլիճը՝ որպես բնակելի տուն:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 132-Ա)*

ԼՍԵՑԻՆ

10" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 7-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՌԱՖԻԿ ԴԻԼԱՆՉՅԱՆԻՆ ԵՎ ՆՎԱՐԴ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ՓԱՐՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով, 66-րդ հողվածի 1-ին մասի 5–րդ կետով, հիմք ընդունելով Ներքին Խնձորեսկ գյուղի բնակիչներ Ռաֆիկ Դիլանչյանի, Նվարդ Բուդաղյանի և Գորիս համայնքի միջև կնքված համաձայնագիրը և Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Հաշվի առնելով, որ քաղաքացիներ Ռաֆիկ Դիլանչյանը և Նվարդ Բուդաղյանը իրենց սեփականության իրվունքով պատկանող ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ գյուղի 2-րդ փողոց թիվ 34 հասցեի 0,12հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը նվիրաբերել են «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ բնակելի տուն կառուցելու համար, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ գյուղի 2-րդ փողոց 7-րդ նրբանցք թիվ 10 հասցեում գտնվող 0,12հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-063-0003-0030) ուղղակի վաճառքով՝ կադաստրային արժեքի 50 տոկոսի չափով՝ 202000 /երկու հարյուր երկու հազար/ ՀՀ դրամով օտարել Ռաֆիկ Դիլանչյանին և Նվարդ Բուդաղյանին:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը և Հերմինե Դիլանչյանը չեն մասնակցել քվեարկությանը: Հերմինե Դիլանչյանը համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21"1–րդ հոդվածի 1-ին մասի (առկա է շահերի բախում), չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 133-Ա)*

ԼՍԵՑԻՆ

11" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Աճուրդային կարգով օտարել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Բարձրավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության՝ 3,21032 հա (կադաստրային ծածկագիր՝ 09-021-0102-0042) «Խոտհարք» գործառնական նշանակության հողամասը, վաճառքի մեկնարկային գին սահմանելով 1850000 /մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N 146/8 հաշվետվության (Որակավորման վկայական N ԳԳ-2022-31):
2. Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է վճարի հողատարածքի գնահատման, սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ գործառույթների և դրանց հետ կապված ծախսերը:
3. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել նախատեսված հողամասի աճուրդի կազմակերպումը և իրականացումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը և Նարեկ Օրդյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 134-Ա)*

ԼՍԵՑԻՆ

12" «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ԲԱՂԴԱԳՅՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հավելվածն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանում գրանցման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 135-Լ)*

ԼՍԵՑԻՆ

13" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ՓԱՐՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման 39-րդ կետի 1-ին ենթակետը և Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է"***

1. Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ա. Սաթյան փողոցի թիվ 9/1 հասցեում գտնվող 0,00281հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը, որը սահմանազատվել է 09-003-0045-0028 կադաստրային ծածկագրից և որի նկատմամբ գոյություն չունի իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ՝ ճանաչել որպես Գորիս համայնքի սեփականություն:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 136-Ա)*

ԼՍԵՑԻՆ

14" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ և 76-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1918-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. համայնքի ավագանին ***որոշում է"***

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության «Արոտավայր» գործառնական նշանակության 0,419 հա (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0337-0006) մակերեսով հողամասը՝ մրցույթով, 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, տարեկան վարձավճարի մեկնարկային չափ սահմանելով 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:
2. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության «Այլ հողատեսք» գործառնական նշանակության 0,614 հա (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0097-0095) մակերեսով հողամասը՝ մրցույթով, 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, տարեկան վարձավճարի մեկնարկային չափ սահմանելով 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 137-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

15" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏՅՈՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, համայնքի ավագանին ***որոշում է"***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի նոյեմբերի 20-ը, ժամը՝ 15:30-ն:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 138-Ա)*

Արտակ Տոռոզյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին, նիստը ավարտվեց ժամը՝ 16:45-ին:

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
2. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
5. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ
6. ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
7. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
10. ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
11. ՏՈՌՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ
12. ՏՈՌՈԶՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
13. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐՏՅՈՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արտակ Բաղդասարյանը

10 հոկտեմբերի 2025թ